ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
իրավաբանական վարչության առաջատար մասնագետ
Հայաստանի Եվրոպական համալսարանի մագիստրոս

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼԻՍ

Հետազոտության առարկան հանդիսանում է դատական հայեցողության սահմանները անձին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելիս, որի շրջանակներում ուսումնասիրել ենք օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները, հնարավոր լուծման եղանակները: Սույն հետազոտությամբ դատական հայեցողության շրջանակներում մեծապես շեշտադրում է կատարվել քրեակատարողական հիմնարկների և պրոբացիոն ծառայության զեկույցների կարևորությանը, որոնք պրակտիկայում էականորեն կարող են ազդել դատարանի կողմից պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

Ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ ենք կատարել նաև դատական պրակտիկային և առկա հակասություններին, որոնք էլ մեծապես հիմք ենք հանդիսացել հանգել այն եզրակացությանը, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս առաջնային է բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտել տրված զեկույցները ու առաջարկում ենք դիտարկել դրանք պարտադիրության համատեքստում:

Հիմնաբառեր- Դատապարտյալ, պատիժ, դատական պրակտիկա, քրեակատարողական հիմնարկ, պրոբացիոն ծառայություն, դատական հայեցողություն:

Ներածություն:

Արդի հասարակությունում դատական հայեցողության և անձանց իրավունքների պաշտպանության սահմաններին անդրադարձ կատարելիս հարկ է ուշադրություն դարձնել ազատությունից զրկված անձանց իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրատարրերից մեկին, այն է՝ պատժից ազատման ինստիտուտների արդյունավետ գործունեությանը: Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը մշտապես եղել և շարունակում է դեռևս մնալ ինչպես քրեական արդարադատության ոլորտի մասնագետների, այնպես էլ հանրության ուշադրության կիզակետում: Այդ հանգամանքը մեծապես պայմանավորված է ինչպես սույն ինստիտուտի կարևորությամբ, այնպես էլ վերջինիս կիրառկմամբ առաջացած խնդիրներով, ինչի արդյունքում էլ դեռևս հնարավոր չէ հասնել լիարժեք արդյունքի:

Ուստի, գտնում ենք, որ կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում օրենսդրական ձևակերպումները բախվում են դատական հայեցողությանը, ինչի համատեքստում էլ կփորձենք անդրադառնալ ինչպես դատական հայեցողության սահմաններին, այնպես էլ կարևոր դերակատարում ունեցող զեկույցներին, որոնք դիտարկվում են պատժի կրումից ազատվելու հարցը քննարկելիս:

Վերոնշյալի համատեքստում անդրադարձ ենք կատարելու ինչպես օրենսդրական կարգավորումներին, այնպես էլ դատական պրակտիկային, նախադեպային որոշումներին, օրենդրության ու իրավակիրառ պրակտիկայի միջև առկա հակասություններին, ինչը հնարավորություն կտա վեր հանել առկա խնդիրները և առաջարկել որոշակի լուծումներ:

Հետազոտության մեթոդաբանություն:

Մեթոդաբանությունը իրենից ենթադրում է պարտադիր պայման, առանց որի կիրառման հնարավոր չէ իրականացնել հետազոտություն՝ բարդ ու հակասական գաղափարների վերաբերյալ: Մեթոդները ուղղված են հավաստի գիտելիքների ստացման, դրանց ճիշտ կիրառման և արդյունքում կատարված հետազոտությամբ խնդիրների լուծման հստակ առաջարկներով հանդես գալուն:

Հետազոտության մշակման ընթացքում կիրառվել են ժամանակակից այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ ճանաչողության համագիտական մեթոդները, ֆորմալ-իրավական (նորմատիվ-դոգմատիկ) մեթոդները, վիճակագրական ու վերլուծության մեթոդները, ինչպես նաև էմպիրիկ մեթոդը, որոնց շարքում կարող ենք առանձնացնել դատական պրակտիկայի՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային և ՀՀ առաջին ատյանի դատարանների որոշումների ուսումնասիրությունը:

Ֆորմալ-իրավական (նորմատիվ-դոգմատիկ) մեթոդի կիրառման նպատակն է ուսումնասիրել համապատասխան իրավանորմերի բովանդակությունը, այսինքն՝ ելնելով համապատասխան իրավանորմերի բովանդակությունից բացահայտել

www.ardaradatutyunjournal.com

վերջիններիս իմաստն ու նշանակությունը:

Թեմայի հետազոտման շրջանակներում կիրառվել են էմպիրիկ (իրավակիրառ) փորձի ուսումնասիրությունները և վերլուծությունները՝ միջազգային և ներպետական նորմատիվ իրավական ակտերը, դատական ակտերում արտահայտած իրավական դիրքորոշումները, այլ պաշտոնական փաստաթղթերը, որոնք հանգեցրել են առաջարկությունների ձևավորմանը:

Առաջարկությունների ձևավորմանը նպաստել է նաև վիճակագրական մեթոդի կիրառումը, ըստ որի ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ստացվել և դիտարկվել են 2024 թվականին և 2025 թվականի առաջին կիսամյակում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ստացված դիմումները և դրանց վերջնարդյունքները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

1. Իրավական հիմքեր և հիմնավորումներ.

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս առաջնային է բազմակողմանի և օբյեկտիվ դիտարկման ենթարկել օրենսդրական կարգավորումները, ապա նաև անդրադարձ կատարել դատական պրակտիկային, որպիսի պայմաններում կկարողանանք վեր հանել օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի միջև առաջացող էական հակասությունները:

Այսպես.

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք»[1]:

2003 թվականի սեպտեմբերի 24-ին, փոխնախարարների 853-րդ նիստում ընդունվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec (2003)22 հանձնարարականը անդամ երկրներին՝ պայմանական ազատման(պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ, որի 5-րդ մասի 25-րդ և 26-րդ կետերի համաձայն՝ «25. Սահմանվելիք պայմանները և վերահսկողության անհրաժեշտությունը քննարկելիս որոշում ընդունող մարմինը պետք է իր տրամադրության տակ ունենա զեկույցներ, այդ թվում՝ բանավոր հայտարարություններ բանտի անձնակազմից, որի անդամները ճանաչում են ազատությունից զրկված անձանց և ծանոթ են նրանց անձնական հանգամանքներին: Ազատումից հետո վերահսկողություն իրականացնող մասնագետներն ու ազատությունից զրկված անձի սոցիալական հանգամանքներին ծանոթ այլ անձինք ևս պետք է տեղեկություններ տրամադրեն:

26. Որոշում ընդունող մարմինը պետք է ապահովի, որ ազատությունից զրկված անձինք գիտակցեն սահմանված պայմանները, տրամադրվելիք օգնությունը, հսկողության պահանջները, ինչպես նաև պայմանները չկատարելու հնարավոր հետևանքները»:

Նույն հանձնարարականի 4-րդ մասի 20-րդ կետը սահմանում է, որ պայմանական ազատում տրամադրելու չափորոշիչները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի պայմանական ազատում տրամադրվի ազատությունից զրկված բոլոր այն անձանց, ովքեր թեկուզև նվազագույն չափով ապահովում են օրինապահ քաղաքացիներ դառնալու երաշխիքները[2]:

ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալը դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ կարող է ազատվել պատժից, եթե դատապարտյալը կրել է պատժի՝ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված համապատասխան նվազագույն ժամկետը, և դատարանը դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների ներկայացրած զեկույցների ուսումնասիրման հիման վրա համոզվում է, որ դատապարտյալի վերասոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, քանի որ՝

1) պատժի կրման ընթացքում նա դրսևորել է պատշաճ վարքագիծ

2) նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանվում է այն հանգամանքները, որոնք հաշվի են առնվում դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս.

1) պատժի կրման ընթացքում խրախուսանքի կամ տույժի առկայությունը,

2) պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն,

3) պատժի կրման ընթացքում աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, և չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով,

4) դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքներ:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

1) դատապարտյալի տարիքը պատիժը կրելու, ինչպես նաև հանցանքը կատարելու պահին,

2) հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,

3) ռեցիդիվի առկայությունը,

4) կատարած հանցանքի նկատմամբ ունեցած

վերաբերմունքը,

5) հանցագործությամբ պատճառած վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը, կամ վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնած լինելը,

6) քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը,

7) որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները,

8) մասնակցությունը վերասոցիալականացման, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին,

9) ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը կամ խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,

10) սոցիալական միջավայրը,

11) առողջական վիճակը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և բուժման արդյունքը,

12) հանցանքի կատարմանը նպաստած հանգամանքների փոփոխությունները,

13) դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող այլ հանգամանքներ[3]:

Բացի այդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով սահմանում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված պայմանների առկայության դեպքում:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քրեակատարողական հիմնարկը կամ կարգապահական գումարտակը ներկայացնում է քրեակատարողական օրենսգրքի 133-րդ և 134-րդ հոդվածներին համապատասխան:

Վերոնշալ հոդվածների լույսի ներքո հարկ է շեշտադրում կատարել նաև ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման ընթացակարգին, որը համապատասխանաբար կարգավորվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 133-րդ հոդվածով:

ՀՀ քրեակատարողական օրենգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու նպատակով դատապարտյալը պատժի ժամկետի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված մասը լրանալուց ոչ շուտ, քան երեք ամիս առաջ իրավունք ունի գրավոր դիմում ներկայացնելու քրեակատարողական հիմնարկի վարչակազմին: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը սույն մասով նախատեսված ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ պարտավոր է դատապարտյալին գրավոր ծանուցել դիմում ներկայացնելու կարգի մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ դատապարտյալը դիմումով կարող է ներկայացնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համար համապատասխան հիմնավորումներ:

Վերոնշյալ ընթացակարգից հետո, նույն հոդվածի 3-րդ մասով արդեն սահմանվում է, որ դատապարտյալի գրավոր դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմն այդ մասին ծանուցում է Պրոբացիայի ծառայությանը զեկույց ներկայացնելու նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի սահմանած ժամկետում և կարգով՝ Քրեակատարողական ծառայություն՝ կցելով դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը և անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

Հաջորդիվ, 133-րդ հոդվածի մնացյալ մասերով սահմանվում են զեկույցների ներկայացման ժամկետները, ինպես նաև դրական և բացասական զեկույցների արդյունքում կատարվելիք ողջ ընթացակարգը[4]:

Ինչպես նկատում ենք վերոնշյալ իրավակարգավորումներից, օրենսդիրը սահմանել է բոլոր նախապայմանները անձին հնարավորություն տալով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու, սակայն պրակտիկայում դատարանի կողմից իր հայեցողական լիազորությունները իրականացնելիս հաճախ բախվում ենք միմյանց հակասող իրավիճակների, որոնք զրկում են անձին օրենսդրությամբ նախատեսված պատժի կրումից ազատվելու հնարավորությունից:

2.Դատական պրակտիկան

ՀՀ Վճռաբեկ դատարանը Աշոտ Բաղալյանի վերաբերյալ թիվ ԿԴ1/0120/12/17 քրեական գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ օրենսդիրը սահմանել է այն հիմնական չափանիշները, որոնց հիման վրա դատարանը կարող է գալ եզրահանգման դատապարտյալի՝ պատժի հետագա կրման աննպատակահարմարության վերաբերյալ, այն է՝ պատժի կրման ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելը և դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականության ցածր լինելը: Դեռ ավելին, օրենսդիրը ոչ միայն սահմանել է պատժի հետագա կրման նպատակահարմարությունը որոշելու հիմնական չափանիշները, այլև մանրամասնել է այն հանգամանքները, որոնք դատարանը պարտավոր է պատշաճ վերլուծության ենթարկել այդ չափանիշներից յուրաքանչյուրի առկայության կամ բացակայության մասին օրինական և հիմնավորված եզրա-

www.ardaradatutyunjournal.com

հանգում անելու համար[5]:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննարկվող ինստիտուտի գործադրմամբ անձը պատժից ազատվում է պայմանական (ազատվող դատապարտյալի վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում դատարանը կարող է վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին որոշում կայացնել), ինչը ենթադրում է, որ պատժի նպատակները, ներառյալ՝ անձի ուղղումը, դեռ լիովին իրականացած չեն:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԱՐԱԴ/0002/12/16 քրեական գործով 2016 թվականի նոյեմբերի 01-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«Քննարկվող ինստիտուտի գործադրմամբ անձը պատժից ազատվում է պայմանական(ազատվող դատապարտյալի վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում դատարանը կարող է վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին որոշում կայացնել), ինչը ենթադրում է, որ պատժի նպատակները, ներառյալ՝ անձի ուղղումը, դեռ լիովին, ամբողջապես իրականացված չեն: Այս պայմաններում եթե պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հիմքը դիտվի դատապարտյալի ուղղված լինելը, ապա ստացվում է, որ պատժի նպատակներն ապահովվել են, իսկ այդ հանգամանքը իմաստազրկում է քննարկվող ինստիտուտի դերն ու նշանակությունը: Հատկապես պայմանական վաղաժամկետ ազատման հիմքը ենթակա է, ոչ թե այն դատապարտյալը, ով արդեն ուղղվել է, այլ նա, ում անձի, դրսևորած վարքագծի վերաբերյալ տվյալների և այլ հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նա կանգնած է ուղղման ճանապարհին:

Այլ խոսքով՝ դատարանը պետք է պարզապես համոզվի, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում անձի կողմից օրինապահ վարքագիծ դրսևորելու հավանականության աստիճանը բավարար է, թե՛ հասարակական անվտանգության և թե՛ հասարակությունում նրա վերաինտեգրման տեսանկյունից, իսկ պատժի նպատակները հնարավոր է վերջնականապես իրագործել համապատասխան վերահսկողության ներքո դատապարտյալի ազատության մեջ գտնվելու պայմաններում(…)»[6]:

Վճռաբեկ դատարանը թիվ ՎԲ-212/07՝ Վարդան Մուխսիխաչոյանի և թիվ ՎԲ-213/07՝ Արամայիս Միրիբյանի քրեական գործերով իր կողմից տրված դիրքորոշումներում նշել է հետևյալը.

«Կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը (մեղքի ձև, տեսակ, հանցագործության նպատակ ու շարժառիթ, հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցագործության կատարման եղանակ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան, հանցակցության դեպքում՝ հանցագործությանը հանցավորի մասնակցության աստիճան և այլն) թեև ունի նշանակություն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելու համար, սակայն այն չի կարող պատժից վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու կամ բավարարելու հիմք դիտարկվել: Պատժից ազատելու քննարկվող տեսակի հարցը լուծելիս կատարված հանցագործության բնույթին և վտանգավորության աստիճանին որոշիչ նշանակություն չտալու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ դրանք, ընկած լինելով ոչ միայն հանցագործությունների դասակարգման (ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդված), այլև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հիմքում և ապահովելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման հիմնարար դրույթների իրացումը, դատարանի կողմից պարտադիր հաշվի են առնվում պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս (ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդված): Հետևաբար քննարկվող ինստիտուտի գործադրման հարցը բացառապես հանցագործության որակական և քանակական հատկանիշների հիման վրա լուծելը կամ դրանց հիմնական, առաջնային նշանակություն վերագրելը չի կարող իրավաչափ համարվել(...)»[7,8]:

Հետևաբար, վերոգրյալ նախադեպային որոշումների ուսումնասիրության արդյունքում, կարող ենք նշել, որ պայմանական վաղաժամկետ ազատման ենթակա է այն դատապարտյալը, ում անձի, դրսևորած վարքագծի վերաբերյալ տվյալների և այլ հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նա կանգնած է ուղղման ճանապարհին:

3. Խնդիրներ և հակասություններ.

Իրավական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի համադրմամբ, հիմնավորված է կարծել, որ անհրաժեշտ է, որպեսզի դատարանը համոզվի, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում անձի կողմից օրինապահ վարքագիծ դրսևորելու հավանականության աստիճանը բավարար է՝ թե՛ հասարակական անվտանգության, և թե՛ հասարակությունում նրա վերաինտեգրման տեսանկյունից, իսկ պատժի նպատակները հնարավոր է վերջնականապես իրագործել՝ համապատասխան վերահսկողության ներքո դատապարտյալի՝ ազատության մեջ գտնվելու պայմաններում:

Սակայն պրակտիկայում առավել հաճախ բախվում ենք այն իրավիճակներին, երբ դատարանը որոշում կայացնելիս անտեսում է քրեակատա-

ղողական հիմնարկների և պրոբացիայի ծառայության կողմից տրամադրված եզրակացությունները և մնացյալ փաստական հանգամանքներից առանձնացնելով միայն բացասականը՝ իր որոշմամբ հնարավորություն չի տալիս դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու:

Նման պայմաններում հարկ ենք համարում նաև անդրադարձ կատարել առաջին ատյանի դատարանի մի քանի որոշումներին, որոնք ինքնին բացահայտում են դաատական հայեցողության իրականացման ընթացքում առաջացող էական հակասական խնդիրները:

Այսպես, թիվ ԵԴ-1/0043/12/25 քրեական գործով դատապարտյալ Էդգար Ադամյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս առաջին ատյանի դատարանը առանց պատշաճ հիմնավորման՝ անտեսելով քրեակատարողական հիմնարկի և պռոբացիայի ծառայության դրական զեկույցները որոշում է կայացրել մերժել քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը[9]:

Դատարանը սույն որոշմամբ նշել է, որ դիտարկել է դրական եզրակացությունների առկայությունը, սակայն գտել է, որ տվյալ եզրակացությունները և դատապարտյալի պատշաճ վարքագիծը հիմք չեն նման միջնորդությունը բավարարելու:

Իսկ մեկ այլ քրեական գործով՝ թիվ ԼԴ/0172/15/24, դատարանի որոշմամբ հիմք է ընդունվել բացառապես երկու բացասական եզրակացությունները և կրկին մերժվել է ներկայացված միջնորդությունը[10]:

Այս պայմաններում կարող ենք արձանագրել, որ դատարանը օգտվելով իր հայեցողական լիազորություններից տարբեր իրավիճակներում կարող է կայացնել միմյանց հակասող որոշումներ և ըստ հայեցողության մի դեպքում դիտարկի զեկույցը ու որոշման հիմքում դնի, իսկ մեկ այլ դեպքում անտեսի, դիտարկելով ոչ հիմնավոր և զուտ խորհրդատվական բնույթ կրող:

Ուստի, նման հակասական պայմաններում, տվյալ քրեական գործերից զատ սույն աշխատանքի շրջանակներում հետազոտել ենք նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից տրված վիճակագրական տվյալները, որի արդյունքում ձեռք ենք բերել որոշակի ցուցանիշներ 2024 թվականից 2025 թվականի առաջին կիսամյակում քրեակատարողական հիմնարկների կողմից տրված զեկույցների և դրանց արդյունքում դատարանի կողմից կայացրած որոշումների վերաբերյալ (Տե՛ս հավելված 1):

Սույն վիճակագրությունը ուսումնասիրելիս նկատում ենք, որ տվյալ ժամանակահատվածում եղել են բազմաթիվ դիմումներ, սակայն այստեղ հուշագրավը այն է, որ երկու բացասական եզրակացություններով դիմումները բավարարելու և պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու վերաբերյալ որոշումների ծավալը գերազանցում է դրական եզրակացություններով դիմումների դրական արդյունքներին[11]:

Այսպես, վիճակագրական տվյալները փաստում են, որ 2024 թվականին կազմվել են 735 զեկույցներ, իսկ 2025 թվականի 1-ին կիսամյակին՝ 438 զեկույց, որոնցից 328-ը՝ բացասական,109-ը՝ դրական (Տե՛ս հավելված 2):

Հարկ է նշել, որ ստացված վիճակագրական տվյալների շրջանակներում առանձնացրել ենք նաև որոշակի ցուցանիշ դատարան ներկայացված և չներկայացված միջնորդությունների, ինչպես նաև դատարանում սույն միջնորդությունների բողոքարկումների վերաբերյալ (Տե՛ս հավելված 3):

Այսպիսով, ընդհանուր առմամբ առկա ցուցանիշների հիման վրա նկատում ենք, որ 2024 թվականի ընթացքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է 138, իսկ 2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում՝ 75 անձ (Տե՛ս հավելված 4):

Եզրակացություն և առաջարկություն

Կատարված հետազոտության շրջանակներում իրավական կարգավորումների ուսումնասիրությունը փաստում է, որ առկա են օրենսդրական հստակ ձևակերպումներ, որոնք հնարավորություն են տալիս դատապարտյալին պատժի կրումից պայմանական ազատելու, ինչպես նաև դրա իրականացման որոշակի ընթացակարգերը:

Հարկ ենք համարում նշել, որ նման ընթացակարգերը բավականին լայն հնարավորություն են տալիս պատժի կրումից պայմանական ազատելու վերաբերյալ որոշում կայացնելուց առաջ բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն կատարելու համար:

Սակայն օրենսդրական վերոնշյալ կարգավորումներից զատ կարծում ենք, որ առկա են դեռևս որոշակի պահանջներ, որոնց կիրառումը կարող է բացառել հակասությունների առաջացումը:

Դիտարկելով նաև վերոնշյալ քրեական գործերում առաջին ատյանի դատարանների հետևությունները, կարծում ենք, որ վերջիններս կառուցված չեն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար նշանակություն ունեցող հանգամանքների՝ քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի գտնվելու ամբողջ ժամանակահատվածում վերջինիս վարքագծի, նրա անձի և կատարված հանցագործության մասին տվյալների բազմակողմանի ուսումնասիրության ու վերլուծության վրա:

Մասնավորապես, հիմքեր կան եզրակացնելու, որ առաջին ատյանի դատարաններն անտեսել և ընդհանուր համակցության մեջ չեն վերլուծել դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում

www.ardaradatutyunjournal.com

դրսևորած վարքագիծը՝ քննարկվող ինստիտուտի գործադրմամբ հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու ողջամիտ հավանականությունը գնահատելու համատեքստում:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունների և ձեռք բերված վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում կարծում ենք, որ առաջին ատյանի դատարանների կողմից նման որոշումները կարող են կասկածի տակ դնել ինչպես ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 133-րդ և 134-րդ հոդվածներով նախատեսված դրույթները, անպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պայմանները, քանի որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հիմքում առաջնայինը դրվում են վերոգրյալ հոդվածներով սահմանված հանգամանքների առկայությունը հավաստող փաստերը, ինչը սակայն ինչպես նկատում ենք չի կատարվել և, ավելին, դիտարկվել է որպես ոչ հիմնավոր:

Վերոգրյալ ուսումնասիրությունների արդյունքում, հարկ ենք համարում ընդգծել, որ քրեակատարողական հիմնարկը՝ որպես պատժի կրումն ապահովող վայր ունի կարևորագույն դերակատարում դատապարտյալների վերասոցիալականացման և վերաինտեգրման գործընթացում, և չպետք է այն դիտարկել բացառապես պատժի կրումն ապահովող կառույց:

Ուստի, պետք է ճիշտ գնահատել և օբյեկտիվորեն առավել կարևորել քրեակատարողական հիմնարկի կողմից տրված գնահատականները, քանի որ առաջնային միջոցները ձեռնարկում և պատշաճ վերահսկողությունը իրականացնում է հենց քրեակատարողական հիմնարկը:

Այսպիսով, հիմք ընդունելով քրեակատարողական հիմնարկի և պրոբացիոն ծառայության կողմից տրվող եզրակացությունների կարևորությունը ու դատական հայեցողության սահմաններում դրանց դերի նվազման հանգամանքը, առաջարկում ենք.

1. Ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք պրակտիկայում դատական հայեցողության սահմաններում չեն զրկի անձին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու իրական հնարավորությունից և իրապես չեն նվազեցնի եզրակացությունների դերը այդ գործընթացում:

2. Օրենսդրական ձևակերպումներում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնց շնորհիվ դատական պրակտիկայում քրեակատարողական հիմնարկի և պրոբացիոն ծառայության կողմից տրվող եզրակացությունները կկրեն ոչ թե խորհրդատվական, այլ պարտադիր բնույթ:

Հավելված 1

		2024թ.	2025թ. 1-ին կիսամյակ
1.	Առաջին ատյանի դատարանի կողմից բավարարվել են	105	58
2.	Առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել են	242	132
3.	Վերաքննիչ դատարանի կողմից բավարարվել են	2	2
4.	Վերաքննիչ դատարանի կողմից մերժվել են	18	18

Հավելված 2

		2024թ.	2025թ. 1-ին կիսամյակ
1.	ՔԿԾ դրական զեկույց, ՊԾ դրական զեկույց	59	29
2.	ՔԿԾ բացասական զեկույց, ՊԾ բացասական զեկույց	538	295
3.	ՔԿԾ դրական զեկույց, ՊԾ բացասական զեկույց	124	68
4.	ՔԿԾ բացասական զեկույց, ՊԾ դրական զեկույց	30	25

Հավելված 3

		2024թ.	2025թ. 1-ին կիսամյակ
1.	Միջնորդություն է ներկայացվել դատարան	205	119
2.	Միջնորդություն չի ներկայացվել դատարան	281	158
3.	Բողոքարկվել է դատարանում	231	134

Հավելված 4

	Առաջին ատյանի դատարանի որոշումները	2024թ.	2025թ. 1-ին կիսամյակ
1.	ՔԿԾ դրական և ՊԾ բացասական զեկույցնորով բավարարվել է	27	22
2.	ՔԿԾ բացասական և ՊԾ դրական զեկույցնորով բավարարվել է	17	7
3.	ՔԿԾ բացասական և ՊԾ բացասական զեկույցնորով բավարարվել է	26	11
4.	ՔԿԾ դրական և ՊԾ դրական զեկույցնորով բավարարվել է	35	18
5.	ՔԿԾ դրական և ՊԾ դրական զեկույցնորով մերժվել է	16	18

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ՀՀՊՏ 2015.12.21 /Հատուկ թողարկում Հոդ. 1118, ընունման ամսաթիվ՝ 06.12.2015, ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 22.12.2015)

[2] Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec (2003) 22 հանձնարարականը անդամ երկրներին՝ պայմանական ազատման(պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման)վերաբերյալ(Նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է 2003 թվականի սեպտեմբերի 24-ին՝ փոխնախարարների 853-րդ նիստում), նյութը հայերեն թարգմանությամբ, էջերի քանակը՝ 9

[3] Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրք (Միասնական կայք 2021.05.17-2021.05.30 Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021, ընդունման ամսաթիվ՝ 05.05.2021, ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.07.2022)

[4] Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք (Միասնական կայք 2022.06.27-2022.07.10 Պաշտոնական հրապարակման օրը 29.06.2022, ընդունման ամսաթիվ՝15.06.2022, ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.07.2022)

[5] Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ1/0120/12/17 քրեական գործով նախադեպային որոշում

[6] Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0002/12/16քրեական գործով նախադեպային որոշում
[7] Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-212/07քրեական գործով նախադեպային որոշում
[8] Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-213/07 քրեական գործով նախադեպային որոշում
[9] Առաջին ատյանի թիվԵԴ1/0043/12/25 քրեական գործով որոշում
[10] Առաջին ատյանի ԼԴ/0172/15/24 քրեական գործով որոշում
[11] ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից 07.10.2025 թվականին տրված գրություն և կից ներկայացված վիճակագրություն (2էջ)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն /ՀՀՊՏ 2015.12.21 /Հատուկ թողարկում Հոդ. 1118, ընունման ամսաթիվ՝ 06.12.2015, ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 22.12.2015/, https://www.arlis.am/hy/acts/143723/latest
2. Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)22 հանձնարարականը անդամ երկրներին՝ պայմանական ազատման(պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման)վերաբերյալ(Նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է 2003 թվականի սեպտեմբերի 24-ին՝ փոխնախարարների 853-րդ նիստում), նյութը հայերեն թարգմանությամբ,էջերի քանակը՝ 9, https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800ccb5a
3. Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրք/Միասնական կայք 2021.05.17-2021.05.30 Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021, ընդունման ամսաթիվ՝ 05.05.2021, ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.07.2022/, https://www.arlis.am/hy/acts/215474
4. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք /Միասնական կայք 2022.06.27-2022.07.10 Պաշտոնական հրապարակման օրը 29.06.2022, ընդունման ամսաթիվ՝15.06.2022, ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.07.2022 /, https://www.arlis.am/hy/acts/164938/latest
5. ՀՀ Առաջին ատյանի թիվ ԵԴ1/0043/12/25 քրեական գործով որոշում
6. ՀՀ Առաջին ատյանի թիվ ԼԴ/0172/15/24 քրեական գործով որոշում
7. ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից 07.10.2025 թվականին տրված թիվ 40/12-6850 գրություն և կից ներկայացված վիճակագրություն, էջերի քանակը՝ 2
8. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ1/0120/12/17 քրեական գործով նախադեպային որոշում, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905402406
9. ՀՀ Վռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0002/12/16 քրեական գործով նախադեպային որոշում, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905402071
10. ՀՀ Վռաբեկ դատարանի թիվ ՎԲ-212/07 քրեական գործով նախադեպային որոշում, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905401052
11. ՀՀ Վռաբեկ դատարանի թիվ ՎԲ-213/07 քրեական գործով նախադեպային որոշում, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905401054

Сона Арутюнян
Ведущий специалист юридического управления мэрии города Еревана
Магистрант Европейского университета Армении

РЕЗЮМЕ

Пределы судебного усмотрения при условно-досрочном освобождении от отбывания наказания

Предметом данного исследования являются пределы судебного усмотрения при условно-досрочном освобождении от отбывания наказания, в рамках которого были проанализированы законодательные и правоприменительные проблемы и возможные пути их решения. Особое внимание в исследовании уделено значению отчетов исправительных учреждений и службы пробации, которые на практике могут существенно повлиять на решение суда при рассмотрении вопроса об условно-досрочном освобождении.

В работе также рассматривается судебная практика и существующие в ней противоречия, что послужило основанием для вывода о том, что при рассмотрении вопроса об условно-досрочном освобождении

необходимо всесторонне и объективно исследовать представленные отчеты. В связи с этим предлагается рассматривать данные отчеты в контексте их обязательной оценки.

Ключевые слова: Осужденный, наказание, судебная практика, исправительное учреждение, служба пробации, судебное усмотрение.

Sona Harutyunyan
Leading Specialist of the Legal Department of the Yerevan Municipality
Master's student at the European University of Armenia

SUMMARY

Limits of Judicial Discretion in Granting Conditional Early Release from Serving a Sentence

The subject of this research is the limits of judicial discretion in granting conditional early release from serving a sentence, within the framework of which we have examined the legislative and law enforcement challenges and possible solutions. This study places particular emphasis on the importance of reports provided by correctional institutions and the probation service, which in practice may significantly influence the court's decision when considering conditional early release.

The research also addresses judicial practice and the existing inconsistencies therein, which largely served as the basis for concluding that, when considering conditional early release, it is essential to conduct a comprehensive and objective examination of the submitted reports. We therefore propose that such reports be considered in the context of mandatory evaluation.

Key words: Convict, punishment, judicial practice, correctional institution, probation service, judicial discretion.

Ընագիրը ներկայացվել է 05.03.2026թ.
Ընդունվել է տպագրության 26.03.26թ.